<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Պետական պահպանության ծառայությունը, որը գտնվում է ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 հասցեում, ստորև ներկայացնում է ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 27.10.2020թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 գնման Պայմանագրում(այսուհետև՝ Պայմանագիր) 2020թ.-ի դեկտեմբերի 10-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն)վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ**: Փոփոխությունն իրականացվել է հաշվի առնելով Գնորդի և Վաճառողի միջև կնքված համաձայնագիրը:

**Փոփոխության նկարագրություն և հիմավորում:** ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն 27.10.2020թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 գնման պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները հատկացվել են, ինչով պայմանավորված 27.10.2020թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 գնման պայմանագրի 8.5 կետի համաձայն Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել վճարման ժամանակացույցը և սահմանել ապրանքների մատակարարման նոր վերջնաժամկետ:

Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող ՝ Կարեն Գասպարյանին:

Հեռախոս՝ 010 – 53-23-58

Էլ. Փոստ՝ karen-gasparyan89@mail.ru

Պատվիրատու ՝ Պետական պահպանության ծառայություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

<<10>> <<12>> 2020թ.

Պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ <<Գնորդ>>, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետի պարտականությունների կատարող, ՊՊԾ պետի տեղակալ Ս.Հովհաննիսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Դամկար» ՍՊԸ-ն, այսուհետ՝ <<Վաճառող>>, ի դեմս տնօրեն Գ. Նարիբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրի 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով (այսուհետև Համաձայնագիր) Գնորդը հայտնում է, որ 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռք բերման համար ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցեր նախատեսվել են, ինչով պայմանավորված կողմերը կնքեցին սույն Համաձայնագիրը, ըստ որի սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված, ձևով Գնորդին մատակարարել ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված գրասենյակային ապրանքները (այսուհետև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2020 թվականը:

## 2.Մատակարարման պայմանագիրը

2.1 Վաճառողը պարտավորվում է ապրանքը մատակարարել 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

2.1.1 Կողմերը եկան համաձայնության 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրի հավելված 1-ը և հավելված 2-ը հաստատել ներքոհիշյալ խմբագրությամբ համաձայն համաձայնագրի՝

## 3. Ապրանքի գինը, մատակարարման պայմանները

3.1 Սույն համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարվելիք ապրանքի գինը ներկայացված է պայմանագրի Հավելված 1-ում: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1035000 (մեկ միլիոն երեսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3.2 Սույն համաձայնագրով կողմերի փոխադարձ համաձայնությամբ 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանվեց 2020թ. դեկտեմբերի 21-ը:

3.3 Պայմանագրի գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև վաճառողի կողմից իրականացվող ծախսերը:

## 4 Այլ պայմաններ

4.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 27.10.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-20-1 պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմաններով նախատեսված իրավունքները և պարտականությունները, ապրանքի հանձնման և ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| Պետական պահպանության ծառայություն | <<Դամկար >> ՍՊԸ |
| ք. Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 | ք. Երևան Անդրանիկի 129, բն. 4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ » ԲԲԸ |
| Հ/Հ 900011004497 | Հ/Հ 163688001532 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 04428836 |

Պետի պարտականությունների կատարող, պետի տեղակալ՝
Ս. Հովհաննիսյան

Տնօրեն Գ. Բարիբեկյան

Հավելված N 1

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի | | | | | | | | ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 39263100/501 | Գրասենյակային լրակազմ | Դամկար Դամկար ՍՊԸ | **Նվազագույն պարամետրերը**<br>**Բազմոց 3+1+1**<br>Բազմոցի ու բազկաթոռների հիմքը պատրաստված կլինի հաճարի փայտից, թևերը՝ բարձրորակ արհեստական կաշվից, կտորը՝ բարձրորակ գործվածքից (3-րդ կարգ): Սպունգի խտությունը՝ 35, իսկ հաստությունը՝ 15սմ:<br>Հավաքածուն բաղկացած կլինի մեկ բազմոցից և երկու բազկաթոռից:<br>Բազմոցը բացվում է (գրքի պես), ներսում կա պահոց, նախատեսված կլինի նաև որպես մահճակալ օգտագործելու համար (բացված վիճակում):<br>Բազմոցի արտաքին չափերն են՝ երկարություն՝ 234 սմ, խորություն՝ 88սմ, բարձրություն՝ 89սմ, ներքին չափերը՝ երկարություն՝ 190սմ, խորություն (փակ վիճակում)՝ 57սմ, խորություն (բացված վիճակում)՝112սմ:<br>Բազկաթոռի արտաքին չափերը՝ երկարություն՝ 102սմ, խորություն՝ 82սմ, բարձրություն՝ 89սմ, ներքին չափերը ՝ երկարություն՝ 59սմ, խորություն՝ 57սմ:<br>Կտորի ու կաշվի գույնը ՝ ըստ պատվիրատուի:<br>Երաշխիքային սպասարկում՝ 3 տարի: | հատ | 250000 | 500000 | 2 | Ք. Երևան Էջմիածնի խճուղի 88 | 2 | սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, բայց ոչ ուշ քան 21.12.2020թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Լրագրասեղան- 2 հատ** Պատրաստված կլինի բարձրորակ 16մմ հաստությամբ լամինատից, սեղանի երեսը հաստեցված կլինի 2 լամինատի չափով (32 մմ), լամինատի եզրերը պատված կլինեն 0,4մմ-ոց հաստությամբ եզրաժապավենով (PVC), սեղանի ներքևի հատվածում կլինի ամսագրերի կամ այլ իրերի համար նախատեսված հատված (полка): Արտաքին չափերը՝ երկարություն՝120սմ, լայնություն՝ 70սմ, բարձրություն՝ 53 սմ: Լամինատի գույնը ՝ ըստ պատվիրատուի: Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի: | | | | | | | |
| 2 | 39121100/501 | Գրասեղաններ | Դամկար Դամկար ՍՊԸ | **Նվազագույն պարամետրերը** Պատրաստված կլինի 16մմ հաստությամբ բարձրորակ լամինատից: Սեղանի երեսի չորս կողմը 3,5 սմ լայնությամբ պրոֆիլով փաթաթված: Սեղանի մնացած հատվածները պատված կլինեն 0,4մմ-ոց հաստությամբ եզրաժապավենով (PVC): Սեղանի տակի աջ կողմում 4հատ դարակաշար դեպի դուրս բացվող, դարակների արտաքին հատվածի վրա բռնակի առկայություն: Սեղանի երկարությունը՝ 125սմ, լայնությունը՝ 64սմ, բարձրությունը 76 սմ: Լամինատի գույնը ՝ ըստ պատվիրատուի: Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի: | հատ | 26500 | 265000 | 10 | Ք. Երևան Էջմիածնի խճուղի 88 | 10 | սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, բայց ոչ ուշ քան 21.12.2020թ. |
| 6 | 39111220/501 | Բազկաթոռ՝ ղեկավարի | AMF AMF OOO Арт-Пром | **Նվազագույն պարամետրերը** հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի խաչուկով: Պտտվող, թիկնակը՝ փափուկ, ոռուցիկ: Կողային հենակները ընդհանուր փակ.երեսպատված բնական փայտով: Ոտքերը ամուր երկաթյա, երեսպատած բնական փայտով, պտտվող անիվներով, անիվների միացման դետալները մետաղից: ճոճվող, նստատեղը բարձրացնելու և իջեցնելու հնարավորությունով: Նստատեղի չափերը 53սմ/55սմ,/խորություն/լայնություն, թիկնակի չափսերը 78սմ,/53սմ/բարձրություն/լայնք. | հատ | 135000 | 270000 | 2 | Ք. Երևան Էջմիածնի խճուղի 88 | 2 | սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, բայց ոչ ուշ քան 21.12.2020թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | արմնկակալների արտաքին հեռավորությունը 67սմ, հատակից մինչև նստատեղ 52 սմ,ընդհանուր բազկաթոռի բարձրությունը 124սմ : Պաստառապատված է բարձր որակի կաշվի փոխարինողով: Եվրոպական արտադրության կամ համարժեք: Արտաքին տեսքը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի: | | | | | | | |

ԳՆՈՐԴ
Պետական պահպանության ծառայություն
ք. Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետի պարտականությունների կատարող,
պետի տեղակալ Ս.Հովհաննիսյան

ՎԱՃԱՌՈՂ
<<Դամկար >> ՍՊԸ
ք. Երևան Անդրանիկի 129, բն. 4
«Հայէկոնոմբանկ » ԲԲԸ
Հ/Հ 163688001532
ՀՎՀՀ 04428836

Տնօրեն Գ. Լաբիբեկյան

Հավելված N 2

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39263100/501 | Գրասենյակային լրակազմ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 500000 | 500000 |
| 2 | 39121100/501 | Գրասեղաններ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 265000 | 265000 |
| 6 | 39111220/501 | Բազկաթոռ՝ ղեկավարի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 270000 | 270000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | 1035000 (մեկ միլիոն երեսունհինգ հազար) ՀՀ դրամ |

**ԳՆՈՐԴ**
Պետական պահպանության ծառայություն
ք. Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետի պայմանագրային կառավարող,
պետի տեղակալ՝ Ս.Հովհաննիսյան

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Դամկար >> ՍՊԸ
ք. Երևան Անդրանիկի 129, բն. 4
«Հայէկոնոմբանկ » ԲԲԸ
Հ/Հ 163688001532
ՀՎՀՀ 04428836

Տնօրեն Փ. Սարգսյան